

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՅԹՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Անգլիացիներն ես կը գտնեմ՝ բոլոր մարդոց մէջ՝ ամենէն աւելի հաստատուն և կանգուն կեցողը իր կօշիկներուն վրայ... Եթէ կայ բան մը որ իրեն համար արժէք մ'ունենայ, է արիւթիւնը կամ սրտոտութիւնը (pluck)․ բառ մը որ ստուգիւ չէ այնքան գեղեցիկ, բայց ամբողջ Ազգը համաձայն է, երբ կ'ուզէ սոյն բառով մանաւոր յատկութիւն մը նշանակել։ Կառապաններ, վաճառականներ, կիներ, եպիսկոպոսներ, լրագիրներ, առ հասարակ ունին սոյն յատկութիւնը․ Times լրագիրը, կ'ըսեն, ամենէն սրտոտ իրականութեան յատկանիչն է Անգլիոյ մէջ։

Անգլիացիք կ'ուզեն որ իւրաքանչիւր մարդ իր կարծիքին տէրը ըլլայ, ու կ'առնեն կեղծ ու վեհերոտ այն մարդը, որ գործի մէջ անկարող է ուղղակի պատասխանելու այս կամ ո՛չ: Անոնք կը համարձակին իրենք գիրենք քեզի անախորժ ընել. ո՛չ միայն, այլ և կը թողուն որ զրժես բոլոր պատուէրաններուն, միայն թէ յայտնի և բնական կերպով զրժես: Պէտք է ինքզինքդ կարեւոր մարդ մը ցուցնես. այն առնեն պիտի կարեն նա ա՛յլ ոչ ոքի ոչ պէտք կ'առնայ գործին մէջ:

Անգլիացիներն կը քալէ, կ'ուտէ ու կը խմէ, կ'ածիլուի, կը հագուի, շարժուձեւեր կ'ընէ և ամէն կերպով ու իրեն յատուկ եղանակով կը գործէ ու կը կրէ, առանց իր քովիներէն ակնածելու, զգուշանալով սակայն որ չխառնուի անոնց գործերուն և անոնց տաղտուկ չպատճառէ. ոչ թէ ինք սովորած ըլլայ մերձաւորներուն նայուածքը բանի տեղ չդնելու, այլ որովհետեւ իրապէս գրազած է իր անձնական գործով ու չի խորհիր անոնց վրայ: Իւրաքանչիւր մարդ, այս քաղաքակիրթ երկրիս մէջ, իր պատեհութեան

Համաձայն կը գործէ՝ այնպէս՝ ինչպէս պիտի գործէր Ուխաբոնսինի մէջ առանձնացած ռահազորդ գաղթական մը (pioneer)։ Զգիտեմ թէ աշխարհիս մէջ կա՞յ տեղ մը, ուր անհատական արտառոցութիւն մը այսքան ազատօրէն թոյլ տրուի, և միաժամանակ ոչ ոք տառով երբեք զբաղի։ Անգլիացին տեղափոխարար անձրեւին տակ կը քալէ, դոց հովանոցը ձօձելով ձեռքին մէջ իբր գաւառան։ գլխուն վրայ կը դնէ կեղծամ մը, ցփսի մը, կամ համետ մը, և կամ գլխիվայր կանգուն կը կենայ, և ոչ ոք այդ մասին զիտողութիւն կ'ընէ։ Լը որովհետեւ շատ մը սերունդներ նոյն բանը կատարած են յաջորդաբար, այլ եւս ատի մտեր է իր արիւնին մէջ։

Վերջապէս, այս կղզեքնակներէն իւրաքանչիւրը ինքնին կղզի մը դարձած է, ապահով, անվտանգ, անհաղորդական: Օտարներու խումբի մը մէջ՝ դու զինքը խուսի մը պիտի կարծէիր. անոր աչքերը չեն թափառիր իր սեղանէն ու իր օրաթերթէն աւելի հեռուն: Երբք չես տեսներ զինք հետաքրքրական բանէ մը տարուած կամ անպատշաճ յուզումէ՝ մը բռնուած: Անգլիացիք առ հասարակ կրթուած են կենցաղագիտական մի և նոյն խիստ դպրոցին մէջ: Օտարներու ձեռք չեն տար: Թոյլ չեն տար որ աչքերդ իրենց աչքերուն հանգիպին: Գրեթէ նախատինք կը համարին մարդու մը երեսը նայելը՝ առանց նախապէս անոր ներկայացուած ըլլալու: Ներկայացումները նուիրական բաներ են իրենց համար:

Անգլիացիք կը պահէն միշտ իրենց հին սովորոյթները, տարադներն ու շքեղ հանդէսները, իրենց կեդժամն ու մականը, արքայական թագն ու գաւազանը: Անտրալի

փողոցներուն մէջ տակաւին կը տեսնուին Միլին Դարերու հետքերը... Անոնք, ներկայ թագաւորին պսակման օրը, կրկնեցին մետասաներորդ դարու իրենց արարողութիւնները: Ժառանգական-աւատական տիտղոս կամ իրաւունք բնական բան մըն է իրենց համար: Հանրային պաշտօններ, հողային վարձումներ, գործառնութիւն և աւանդութիւններ այսպէս կը սերին ու մինչեւ մեզի կը հասնին: Անգլիական զօրութեան հիմերէն մին է նաեւ իրենց խորշիւքը

փոփոխութիւններէ : Պարոնները կ'ըսեն.
Nolumus mutari « Չենք ուզեր փոփո-
խուիլ », ու լոնտրայի բնիկները (Cockneys)
երբ օտարականներէն խնդրուին բացատ-
րելու այս կամ այն սովորոյթին պատճառը,
ծագումը, անոնց հետաքրքրութիւնը խափա-
նելու համար, կը պատասխանեն. պարզա-
պէս « Լորտ, Պարոն, ասի միշտ այսպէս է
եղած » :

P. W. EMERSON

R. W. EMERSON
(English Traits)

Р. Г. М. З. Ф. Б.

ՀԱՅԿ • ՄԻՋԻՆ ԴԱՐՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԿՇՈՒՂ ԲՈՒՏԱՂ ՕՂԼԻ ՂԱԶԻ ԻՍՆ

1937ին Սպահան գտնուած ատենս յարգելի Պր. Մարտիրոս Արգար ինձի նուիրեց կարգ մը արժէքաւոր վաւերաթուղթերու հետ նաեւ քանի մը հին ձեռագիրներ, որոնցմէ մին հաւաքածոյ մըն է հեքեթ-նեբու որպէս Պղնձէ Քաղաք, Խրատք Խիկարի եւայլն, եւայլն, գրուած թուղթի վրայ

Ի Սուրաթ Բանդար (Հնդկաստան) 1720ին:
Սոս ձեռագրին վերջը կայ գրչէն տաղ մը,
գրուած Բուտաղ Օղլի Ղազի Խան աշուղ-
տաղտասացէն, որուն ինքնութիւնը այլուստ
ինձի բոլորովին անծանօթ կը մնայ:
Ահա այդ տաղը իր իսկ կէտագրութեամբ:
Տաղին խորագիրն է.

«**Հոգիւն. եւ մարմին մեղաց համար յին զմիևոյ. հետն բանս է. արարեալ**»

Հոգին. ի մարմին. եղբայր, շուռ կուգան աշխարհս, հետ իրանց.
 Դատել եմ. շատ խաղինայ ⁽¹⁾ մեղք ու վարձք. գիւիտն ⁽²⁾ է դրած.
 Հոգին. ի մարմնուն. ասաց միաբան. լինենք յետ իրանց.
 Ծու(ն)րը ածենք. աղօթք անենք թուղութիւն, խնդրենք. մեր մեղաց
 Մարմին. ի հոգուն. ասաց. դեռ մանուկ եմ յետըն. մանկաց.
 Նստել պիտի. ուտենք ու խմենք. մէկ զմէկ. սրտով ենք. սիրած.
 Հոգին. ի մարմնուն. ասաց. դու արթուն, կացիր, դու իմաց.
 Գնայ մօտ եկեղեցի ծուռտր. ածիր դու քոյ մեղքն. Լաց
 Մարմին. ի հոգուն. ասաց. աշխատել պիտիք շոր ու հաց.
 Նստիք ուտեք. ու խմեք. շոր հագնինք. շուռ գանք. զարդարած.
 Հոգին. ի մարմնուն. ասաց. քեզ խրատ տամ վերայ. խելաց.
 Հաց մի կեր հաց մի հոգուտ. դու խնդրէ. որ տաս. աղքատաց
 Մարմին. ի հոգուն. ասաց. ամարաթ, շինիք բոլորած.

Այսպիսի աղքատ մարդոյ. ի որ տած ուտի. քաշ ու հաց.
 Հոգին. ի մարմնուն. ասաց. դու անգէտ ես ու անիմաց.
 Թէ ապրես. հարուր տարի. կեչ յառէջ. մեռածն ես. մեռած.
 Մարմին. ի հոգուն. ասաց. դեռ թիփլ իմ չէ լցուած.
 Թէ ապրեմ. հարուր տարի հարուր էլ. խնդիրք եմ. էրած.
 Հոգին. ի մարմնուն. ասաց. թէ հանդիպես հանկարծակաց.
 Լինես. դուր ու դապս. ընկնես աղաչես. դու հրեշտակաց.
 Մարմին. ի հոգուն. ասաց. դու նման ես հրեշտակաց.
 Պիտի իմ կամքով լինես. ամանաթ (3). քեզ ինձ է տված.
 Հոգին. ի մարմնուն. ասաց. ամանաթ. դու պահիր. ձեռաց.
 Այլ մի պիտի. տաս տէրըն ինչ պէս օր նայ քեզ է տված.
 Մի պահիր պղինձի. նման. ծանկոտած. փողոցն է. դձած.
 Դու պահիր. ոսկու նման. ծաղկածալ շորում փաթաթած.
 Մարմին. ի հոգուն. ասաց. դեռ խորհուրդն չէ. կատարած.
 Ունիմ շատ դուստր ու որդի. պսակած. որն չէ պսակած.
 Ունեմ. շատ ոսկի արծաթ. խաղինիքս. դուռն չեմ բացած.
 Հոգին. ի մարմնուն. ասաց. քանձ ըղբեղ մեծ թագաւորաց.
 Դուստր որդի. ոսկի արծաթ խաղինէն. անտէր մնացած.
 Մարմին. ի հոգուն. ասաց. գին տված փողով եմ. առած.
 Ունեմ շատ քուշք (4) ու սորայ (5). արծաթով. ոսկով եմ. ծեփած.
 Հոգին. ի մարմնուն. ասաց. սուտված. ուր ամ ես էրած.
 Ունես շատ քուշք ու. սորայ ինչ անեմ. մեղքով ես չինած.
 Մարմին. ի հոգուն. ասաց. քըթընած. ջաջրայ եմ. քաշած.
 Ունիմ շատ շինելոյ սորայ կիսատ այ. դեռ չէ թամամած (6).
 Հոգին. ի մարմնուն. ասաց. դու իշխան ես փառաւորած.
 Գնայ մէկ սարայ շինէ որ կենայ. չուր (7) յաւիտենաց.
 Գնայ. մէկ կարմուճ. կապէ. որ մաղէ կարմուճուն. այնց կենաս.
 Մարմին. ի հոգուն. ասաց շատ ապրանք. ունիմ աշխատած.
 Արի իմ տխմար. հոգի ինչ գիտես. ինչով եմ դատած.
 Հոգին. ի մարմնուն. ասաց սուտ տված. աղորդ (8) ես. դատած.
 Ուրայ. Հարոն զարոնըն. որ շատ ապրանքն ձեռնէն. գնաց.
 Ուրայ Դօրչատին ուր համար. գրախտըն էր. շինած.
 Կամ Թար. թագաւորին. որ գոռքն անած էր երած.
 Արի իմ տխմար. մարմին բեր տեսնեք. աշխարհս ում մնաց.
 Չմնաց Արրահամու որ Սահակ մատաղ էր էրած.
 Չմնաց որդի. Գաթի. Սողոմոն տաճարն էր. շինած.
 Չմնաց հասկան տարին. որ աշխարս. զաֆտ էրած.
 Կըռապաշտ. ա(ստուա)ծապաշտ. մեծայմեծ. թագաւորաց.
 Միտուն. փոշիման գնաց. թէ չես աւտատլ դու ինձ.
 Ի գնայ ի մօտ կարքաւորին. պահիկ մէկ համար արայ.
 Տես ինչ կայ մէջ զրքին գրած. ի որ. աւետարանին քսի. բանքերն օրինած.
 Մի երթար հարամ (9) ուտել. քանի կայ հալալն (10). է գրած.
 Մի երթար. ընկեր զրկել. ընկերին զրկողն է. զրկած.

Մի երթալ իտրա անել զրկցիցն յետ օտար մարդկանց.
 Մի երթար մարդու զամբել (11) մեծանաց մօտն հովանաց
 Կեղանես դու (3) դայի նման Կահինայ Անակ անիծած.
 Արի իմ տխմար մարմին. դու լսէ թէ ինչ ասացած.
 Մարմին. ի հոգուն. ասաց. ինչ ասիր մտնիցս գնաց.
 Թէ մէկ թէ հազար ասես կու թուվի իսկի չեմ լսած.
 Դեռ պիտի ուտեք ու խմենք. ինչ ապրանք ունենք աշխատած.
 Դեռ պիտի սաֆար (12) քչեմ խորհուրդ իմ չէ կատարած.
 Հոգին. ի մարմնուն. ասաց. թէ ապրիս. չուր յաւիտենաց.
 Ախրին. մեռնել պիտես կամիւն ա(ստուծո)յ կատարած.
 Մարմին. ի հոգուն. ասաց. ես քեզ փոքրուտ եմ պախած.
 Պախել եմ մէջ զաւասին (13). անուցած. դեռ չեմ թընցուցած.
 Յիմիկս ճնճղի նման թըռել ես. ծառին նստել չես գալ
 Ի բանդիտ. վըրէն զաֆտ (13) ետ ես քանդած.
 Հոգին. ի մարմնուն. ասաց կու թվի. ախրէր. բաժանած
 Իտ քոյ հանի հուն մալէտ (14). բեր տեսնեմ. ինձ ինչ ես տված.
 Չունիմ. դէկուն (15) մի ձեռաց. խէր (16) արած վարցուց. բաժանած.
 Չունեմ ճաշ մի պաշար. կամ սովածն չես կշտացուցած.
 Մարմին. ի հոգուն. ասաց. բիրֆայ ախրէր ես. կանգնած.
 Թողել ես. ընձի. կերթաս. կու թվի ըսկի չես տեսած.
 Պահիկ մէկ համալ արայ. համբուրեմ ես քեզ կարօտած.
 Հոգին. ի մարմնուն. ասաց ես խիտ քեզի եմ խօսված.
 Թողել եմ. դառտակ. կերթամ անպաշար ճանաչես մոլորած.
 Երթամ ես դարիպ աշխարհ դէմ առնում օտար դոսյն
 Ինչ ասեմ քեզնից. ինչ խնդրեմ (մ)ոչիչ չես տված.
 Մարմին. ի հոգուն. ասաց. փոշիմանեմ (17) ես իմ մեղաց.
 Թողել եմ. խորն. զընտանին ախտիարս ձեռնէ գնաց.
 Գնայ իմ տխմար հոգի ես թողած. եւ դու մոլորած.
 Չուրի տէր զատաստան. նստի այլ ա(ստուա)ծ լինի ողորմած.
 Հոգին. ի մարմնուն. ասաց վայ ինձ վայ մեղաւորաց.
 Տէրն զատաստան. նստի ինչ ասեմ. կալած եմ. կապած.
 Վայ ինձ վայ մեղաւորաց արդարոց. դրախտն է շինած.
 Վայ ինձ վայ մեղաւորաց. մեղ համար դժոխքն է. շինած.
 Դժոխքին. տանջալ պիտի. յաւիտենան. չուր յաւիտենից.
 Բուտաղ Օղլի Ղազի խան. դու քոյ մեղքն լաց
 Քանի քեպէս. սուտ մարդ արեկ աշխարս գնաց
 Ասողաց եւ լսողաց այլ ա(ստուա)ծ լին ողորմած:

Տաղս աւելի բան մը չ'աւելցնենք տա-
 շատոց Բուտաղ Օղլի Ղազի խանի ինքնու-
 թեան մասին: Կ'երեւայ որ պարսկահայ
 տաղասաց մըն է որ ապրած ըլլալու ժէ դարու
 վերջ կամ ժ՛՛՛՛ դարու սկիզբը: Ինչպէս ըսի
 այլուտ անձանթ կը մնայ մեզի, սակայն
 նկատելով անոր սահուն լիզուն, անտարա-
 կոյս ուրիշ տաղեր ալ արտադրած ըլլալու
 է:
 Հոս կ'ուզեմ գիտել տալ հոգւոյ եւ մար-

